1892

* * *

Երբ գիշերային
Մութ հորիզոնից
Արև կամ լուսին
Երևում են ինձ,
Իմ տխուր հոգում
Ծագում է ոսկի
Ճաճանչը հուսո
Հարատև կյանքի,
Եվ մտածում եմ.–
Աշխարքը դեռ կա,
Դեռ օր կըտեսնեմ...
Եվ նշանն ահա։
Հրճվում է հոգիս,
Երգում եմ զվարթ,
Եվ ժպտում են ինձ
Թե՛ Աստված, թե՛ մարդ։

Աստծո տաճարում
Մոմը սեղանից
Խնկաբույր ծխում,
Վառվում է հանգիստ.
Իմ մռայլ հոգում
Առաքինության,
Ճշմարիտ կյանքի
Հավիտենական

Լույսը ցոլանում,
Վառվում է նույնպես.
Սրտով մեղմանում,
Աղոթում եմ ես։

Կուսի աչքերին
Նայում եմ ագահ.
Թնդում է հոգիս,
Դողում ակամա,
Եվ կենդանության
Ախտերը եռուն,
Ախորժ այրվում են
Իմ երակներում.
Սիրտս անհանգիստ
Պայթում է կարծես,
Զգում եմ ցավ, վիշտ...
Եվ տանջվում եմ ես.
Բայց այն տանջանքը
Քաղցր է ինձ համար,
Քան երկար կյանքը,
Աղոթք փրկարար։